ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀԱՅԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

N 94
«09» հոկտեմբեր 2009թ.

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ

«Տեղեկատվական Համակարգերի Զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ պարոն Գրիշա Խաչատրյանին:

ՀՀ Արարատի մարզի Հայանիստի գյուղապետարանից հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության պատվերով, Ձեր կազմակերպության կողմից ստեղծված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրումից առաջ, մեր բյուջետավարման մասնագետը և գործավարը մասնակցել են, Ձեր կազմակերպության կողմից իրականացված, սպասարկող աշխատակիցների ուսուցման դասնթացներին:

Մեր կողմից կատարվում են 1. բնակչության ռեգիստր 2.համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մուտքագրում 3.կազմակերպությունների ռեգիստր 4.հաստիքացուցակի մուտքագրում 5.աշխատակիցների գրանցում 6.անձնական թերթիկների գրանցում:

Կատարված են բյուջետավարման բոլոր գրանցումները:

Կատարվում են աշխատանքներ գույքի կառավարման բաժնում, շուտով կմուտքագրվեն բոլոր անհրաժեշտ տվյալները:

Հայտնում ենք, որ համակարգը լիովին ապահովում է համայնքում կատարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Ձեր գործուն աջակցության շնորհիվ մենք ունեցանք նաև wep կայք:

Դուք մշտապես, Ձեր խորհուրդներով օգնում եք մեր աշխատակիցներին համակարգը ճիշտ շահագործել:

Ակնկալում եմ նաև հետագա առավել արդյունավետ համագործակցություն:

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

Հարգանքներով

Հայանիստ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյան:

N 67
09.10.09